

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ (ԳՐԱԲԱՐԻ) ՀՈՒՈՎՆԵՐԸ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ (V—XV ԳԳ.)
ՔԵՐԱՎԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հորովը, իբրև անվան քերականական կարգ, հենց սկզբից արժանացել է հայ քերականագիտության ուշադրությանը և քննության առնվել վաղ շրջանի՝ V—XV դդ. գրեթե բոլոր քերականական աշխատություններում¹։ Ընդ որում հայոց լեզվի քերականական ինչպես այլ իրողությունների, անպես էլ հորովների բնութագրման ու լուսաբանման համար աղբյուր-ուղեցույց է ծառայել հույների հիմնած փիլիսոփայական-քերականական ուսմունքը, որը և մեզանում սկսել է կիրառվել V դարից՝ Դիոնիսիոս Քրակացու (մոտ 170—90 թթ. մ. թ. ա.), «Τέχνη γραμματικῆ» («Քերականական արվեստ») աշխատության թարգմանությամբ²։

Իր այդ երկում, ինչպես թարգմանությունն է պարզորոշ ցույց տալիս, Գ. Քրակացին հորովն ամենից առաջ անվան հատուկ քերականական կարգերից մեկն է համարել՝ ասելով. «Անուն է մասն բանի հորովական, մարմին կամ իր նշանակելով. մարմին, որզան Բաբ. եւ իր, որպէս խրատ. հասարակաբար... եւ յատկապէս, որգոն Պաղոս: Եւ հետեւին անուան հինգ. սերք, տեսակք, ձեւք, թիւք, հորովք» (հմմտ. «Ὄνομα ἔστι μέρος λόγον πτωτικόν, σῶμα ἢ πᾶγμα σημαῖνον, ὥρα μὲν οἶον ἴδιος. πᾶγμα δὲ οἶον παιδεία. κοινῶς τε καὶ ἰδίῳ λεγόμενον, κοινῶς μὲν οἶον ἄνθρωπος ἴσος. ἰδίως δὲ οἶον Σωκράτης. — Παρέπεται δὲ τῷ ὀνοματι πέντε γένη. εἶδη. σχήματα, ἀριθμοί. πτώσεις»³։

Այդօրինակ սահմանմամբ Գ. Քրակացին հավաստում է, որ անունը իրո՞ք հորովական, այսինքն՝ փոփոխական, փոփոխվող, փոփոխություն կրող «մասն բանի» է, և նրա յուրաքանչյուր փոփոխությունն էլ մի առանձին հորով է։

Ի տրաբերություն ճեմականների, որոնք ուղղականը անվան ուղիղ ձև և ըստ այդմ էլ հորով շէին համարում, նա հետևելով ստորիկներին՝ դրանց պես այն ևս ինքնուրույն հորով է դիտում և հարաշարի մեջ առնելով՝ զտնում, որ «Հորովք են անուանց վեց. ուղղական, սեռական, տրական, (առաջական), հայցական, հոշական» (հույն. բնագրում՝ հինգ է. հմմտ. «Πτώσεις, ὀνομάτων εἶδη: πέντε ὀρθῆ, γενική, δευτική, αίτιατική, κλητική»)⁴։

Գ. Քրակացին, սակայն, հորովները որոշելիս անվան ոչ միայն փոփոխ-

¹ Այդ մասին տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СП, 1915, էջ 1—76; Կ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:

² Н. Адонц, նշվ. աշխ., էջ 1—56:

³ Նույն տեղում, էջ 12—13:

⁴ Նույն տեղում, էջ 17:

ված ձևերը, այլև դրանց արտահայտած նշանակութուններն է նկատի ունեցել՝ տալով այսօր խիստ մակերեսային, տարտամ թվացող, բայց ժամանակի իմաստով արժեքավոր հետևյալ սահմանումը. «Ծե ստի ուղղականն անուանական եւ պարզ. եւ սեռականն՝ ստացական եւ հայրենի. եւ տրականն՝ պատուիրական. եւ առափականն՝ ցուցական. եւ հայցականն՝ խնդրական կամ բոստ հեղղենացոց լեզուին փաստական. եւ հոշականն՝ առասական» (հմմտ. *Λέγεται δὲ ἡ μὲν ὀρθή οὐνομαστική καὶ εὐθαΐα, ἡ δὲ γενική κτητική, τε καὶ πατρική, ἡ δὲ δοτική ἐπισταλτική, ἡ δὲ αἰτιατική τ κατ' αἰτιατικόν, ἡ δὲ κλητική προσωρορευτική*⁵;

Դ. Թրակացին հոլովը բնորոշ է համարել նաև դերանվանը՝ «Ծաղագս դերանունութեան» («Περὶ αντωνυμια») բաժնում նշելով, որ «... հետեւին դերանունութեանց վեց. դէմք, սերք, թիւք, հոլովք, ձեւք, տեսակք» (հմմտ. հուս. «Παρέπεται δὲ τῇ αντωνυμια ἕξ πρόσωπα. γέννη, ἀριθμοί, πτώσεις, σχήματα, εἶδη»⁶;

Բայց այդքանով, իհարկե, նա չի բավարարվել, և, որ ավելի կարևոր ու գնահատելի է, մի խումբ (անձնական և ստացական) դերանունների «նախագաղափարացն» և «ածանցացն» հոլովական ձևերն է պատկերել. հմմտ.— Հոլովք նախագաղափարացն.

«Πτώσεις πρωτοτύπων μὲν ὀρθῆς—ἐγὼ σὺ ἰ
γενικής—ἐμοῦ σο οὐό
δοτικής—ἐμοί σοί σί
αἰτιατικῆς—ἐμέ σέ ἕ
κλητικής—σὺ

Ուղղական—*ես, դու, նա*
Սեռական—*իմ, քո, նորա*
Տրական—*ինձ, քեզ, նմա*
Վառափական—*ինեւ, քեւ, նովաւ*
Հայցական—*գիս, գրեզ, գնա*
Հոշական— *դու* —

«Ծե ածանցացն՝ քարչոյլոն ձէ

—ἐμός σός ὄς
γένικής—ἐμοῦ σοῦ οῖ
δοτικής—ἐμῷ σῷ ῶ
αἰτιατικῆς—ἐμόν σόν ὄν

Ուղղական—*իմ, քո, նոյր*
Սեռական—*իմոյ, քոյ (ոյ), նոր*
(այ) ոյ
Տրական—*իմում, քում, նում*
Վառափական—*իմով, քով, նով*
Հայցական—*գիմ, գքո, գնոյր*⁷;

Ներկայացնելով հունարենի քերականութունը՝ Դ. Թրակացին հոգը ևս՝ «... մասն բանի հոլովական» («Ἄρθρον ἐστὶ μέρος λόγου πτωτικόν»), հոլովն էլ նաև նրա քերականական կարգերից մեկն է համարել («Ծե յարեւին նմա այսք. սերք. թիւք, հոլովք»— «Παρέπεται δὲ αὐτῷ τριά λέννη. ἀριθμοί πτώσεις»)⁸ և անվան սեռի ու թվի հետ կապված նշել, թե ինչպես է այն գործածվում: Այս ամենով, բնականաբար, Դ. Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության հայերեն թարգմանությունը հայ քերականագիտական մտքի զարգացման և դրա հետ մեկտեղ նաև հայերենի հոլովների որոշման ու տեսությունների հիմնախարխուխն է դառնում՝ նշանավորվելով նախ և առաջ հոլովական համակարգին վերաբերող մի շարք գիտանվանումների՝ տերմինների (թիվ, հոլով, ուղղական, սեռական, տրական, հայցական, հոգ և այլն)

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 28:

⁷ Նույն տեղում, էջ 28—29:

⁸ Նույն տեղում, էջ 27:

ստեղծամբ ու կիրառամբ, և ապա՝ թարգմանչի հանդես բերած ստեղծագործական մտտեցմամբ, ինքնուրույն քննախուզական հայացքով և, իհարկե, նաև ոչ միայն հայերենի, այլև հունարենի քաջ իմացությամբ:

Չեռնամուխ լինելով Դ. Թրակացու քերականական աշխատության հայերեն թարգմանությանը և խորապես գիտակցելով դրա մեծ կարևորությունն ու նշանակությունը՝ նրա թարգմանիչը, որ իրավամբ Դավիթ Անհաղթ փիլիսոփան է համարվում⁹, անշուշտ, զգալի դժվարություններ է հաղթահարել և այն իրագործելով՝ լայն ճանապարհ բացել հայ քերականագիտության հետագա զարգացման համար:

Սրան անմիջապես պետք է հավելի, որ առաջինն էլ հենց ինքն է գնացել այդ ճանապարհով և տեսալաշտում ի նկատի ունենալով նաև հայերենը՝ ա) Թրակացու պես ուղղականը ևս ինքնուրույն ու անկախ հոլով է համարել, բ) Թրակացու նշած հինգ հոլովին ավելացրել է առաքականը իբրև գործիական հոլով, գ) հունարենի հոլովները համապատասխան դեպքերում ներկայացրել է հայերենի համարժեք ձևերով, դ) ճիշտ է ըմբռնել հոլովի, իբրև անվան քերականական կարգերից մեկի էությունը, գիտակցել Դ. Թրակացու հոլովական տեսության արժեքը, այն, որ նա իր որոշ նախորդների պես հոլովները հիմնականում որոշել է նրանց արտահայտած նշանակությամբ՝ շանտեսելով միաժամանակ անվան կրած փոփոխությունը (իմա՝ ձևվը), որ և իրավամբ «անկում», «թեքում» (= հուն. πτώσις) է կոչվել:

Դավիթ Անհաղթն այդ տեսանկյունից մեկնաբանելով Դ. Թրակացու քերականությունը՝ շի բավարարվել անվան ու հոլովների վերաբերյալ նրա ասածներով և տվել է նաև լրացուցիչ բացատրություններ, աշխատել ճշտորեն ներկայացնել հայերենի հոլովները:

Այս դեպքում ևս հիմնականում ունենալով հայ հին գրական լեզուն, գրաբարը, նա՝ ա) փորձել է որոշել հոլովների ստույգ քանակը և ինչպես Դ. Թրակացու քերականության, այնպես էլ իր «Մեկնության» մեջ հինգ հոլովին ավելացրել է մի հոլով ևս՝ կոչելով այն առաջական, բ) հոլովները միամորդական, ներունապես իրար հետ կապակցված համակարգ է դիտել և ուղղականը ևս ինքնուրույն ու անկախ հոլով համարելով՝ նշել, որ «Արդ ըստ ի վերուստ դրութեանն անուանն անգումն ասի նոյն ինքն ուղղականն, արինակ իմն գրչի ի վերայ կակուղ իմիք նիւթոյ նկարմամբ ուղիղ կացելոյ և անդուստ ապա հոլովումն առնելով ի սեռական և ի տրական և որ ի կարգին»¹⁰, գ) ընդլայնել է հոլովների սահմանումները, ավելի պարզ բացատրել նրանց նշանակությունները, ինչպես՝ «առուառական ասի ուղղականն, իբրև սկիզբն իմն եւ պատուականագոյն, իսկ պարզ՝ մեկնակ, անշարադիր»¹¹, «Եւ սեռականդ ստացականդ է ըստ ինքեան հանդիպեալ ստացուածոյ եւ կամ հայրենոյ»¹², «Բայց տրականդ լինի թղթական» և կամ՝ «լսի թխթական եւ զի ոչ լսի հաւաստի ի մերումս, որ եւ ի Հոռոմին յայտնի, տրականն ձայնիւ յայսմ անուանէ այսմ անուան առաքեալ»¹³, «Եւ ցուցականդ իսկ

⁹ Այդ մասին տե՛ս, օրինակ, Առաքել Սիւնցի, Յաղագս քերականութեան համառոտ լուծմունք, Լոս Անճելոս, 1982, էջ 73, Գ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 53—61:

¹⁰ Դավիթ Փեռական, Մեկնութիւն քերականին, էջ 325 (Սա բերվում է ըստ Ն. Ադոնցի աշխատության 2-րդ՝ արտասահմանյան հրատարակության տե՛ս, Nicolas Adontz, Denys de Thrace et les Commentateurs Arméniens, Traduit du Russe Imprimerie orientale—louvaiv, 1970, էջ 312—332:

¹¹ Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսիայ քերականի..., էջ 107, այլև՝ Դավիթ Փեռական, Մեկնութիւն քերականին, էջ 325:

¹² Նույն տեղում, էջ 107, այլև՝ 325:

¹³ Նույն տեղում, էջ 108 և 325:

առաքականդ ըստ երկուց դիմաց. յորժամ առաքեսցի ոք յումբքէ, զհեռաւորն նշանաւոր բանիւ ցուցանել եւ զմաւտաւորն եւ որ երեւին տեսութեամբն»¹⁴, «Իսկ հայցականդ, որ ըստ հելլենացւոց լեզուին պատճառական, է այս. քանզի յորժամ ի շար ինչ կամ բարի կոչեսցի ոք, ընդ ձայնին զեկուցանէ զպատճառն»¹⁵, «Նաև կոչականդ յայտնի առհասարակական, զի ո՛վդ, որ է հասարակականի նշանակ, հաւասարապէս եղեալ լինի ի վերայ դիմաց եւ իրաց, բարեաց եւ հակառակին»¹⁶:

Եվ, այսպես, ավելի պարզորոշ բացատրելով հոլովները՝ Դավիթ Անհաղթը առանձնահատուկ ուշադրութիւն է դարձրել նաև նրանց ձևավորման՝ ձևակադմութիւն վրա և նշել, որ կան ձևով և՛ նման, և՛ տարբեր հոլովներ, որ երևում են հատկապես դերանունների հոլովման մեջ: «Բայց հոլովք,— դեռ 15 դար առաջ նկատել է նա,—յաւէտ քան յանուանն աստ ունին զկարգ, զի անդ, որպէս ասացեալ եղև, շատ անգամ այլ այլոյ բերել ձև (ընդգծումըն իմն է,—Ա. Մ.), որով զանխլացեալ լինի յաներեւութենէ իբր թէ տրական զսեռականին եւ հայցական՝ զուղղականին եւ առաքական զկոչնականին»¹⁷:

Այսպիսով՝ Դավիթ Անհաղթը ցույց է տվել իրոք ուղղականի, հայցականի և կոչականի, սեռականի և տրական ձևանմանութիւնը և միաժամանակ, որ նույնպես կարևոր է, ուղղականը համարել է այն սկզբնաձևը, որից սերում կամ որի հետ սերտորեն կապվում են մյուս հոլովները, և դա նշել այսպես. «Ձևոյն նմանութիւն անուան ունի և աստ ձեւքն: Բայց ի հոլովեցուցանելն պարտ է նախ յուղղականէն առնել սկիզբն իբր թէ անձն իմ, անձն քո, անձն նորա եւ ապա ի կարգին»¹⁸:

Իր տված այսպիսի մեկնութիւններով էլ Դավիթ Անհաղթը փաստորեն հոլովների ուսմունքի հիմքն է դրել հայ քերականագիտութիւն մեջ և նախակարապետ հանդիսացել ուրիշների համար՝ հետագայում զարգացնելու ու հարստացնելու այն:

Եվ իսկապէ՛ս. առանց սխալվելու կարելի է ասել, որ Դավիթ Անհաղթին հաջորդած բոլոր քերականները՝ սկսած Անանուն մեկնիչից (V դ.) և ավարտած Առաքել Սյունեցիով, ընթանալով նրա բացած ճանապարհով՝ մի կողմից եթե հոլովների վերաբերյալ անցյալի նվաճումներն են նկատի ունեցել և նրանց վրա հիմնվել, ապա մյուս կողմից՝ ըստ կարելիւոյն հանդես են բերել ինքնուրույն մտտեցում և աշխատել նոր կամ լրացուցիչ մեկնութիւններով պատկերել հին հայերենի՝ գրաբարի հոլովներն ու հոլովական համակարգը:

Առաջին հերթին այդպես է վարվել քերական Անանունը, որի մեկնութիւններից պարզ երևում է, որ նա ևս հստակորեն է ըմբռնել ու պատկերել հոլովները: Նախորդների պես անունը «հոլովական մասն բանի» համարելով՝ Անանունը՝ ա) տարբերակել է թանձրացական և վերացական գոյականները, շեշտել, որ «ամենայն որ ընդ տեսութեամբ անկանի եւ ընդ շաւշափմամբ մաւրմին կոչի. իսկ որ ընդ շաւշափմամբ եւ ընդ տեսութեամբ ոչ անկանի, այլ մտաւք միայն իմանի, որպէս իմաստութիւն եւ խրատ, նա իր կոչի»¹⁹,

¹⁴ Նույն տեղում, էջ 108 և 325:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 117:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 138—139:

բ) անվան քերականական կարգերը նույնպես հինգն է համարել («սերք, տեսակք, ձեւք, թիւք, հոլովք») և նշել, որ «Յետ շորիցն հետեւմանց անուանց ասէ եւ զհինգերորդ հետեւումն անուան, այսինքն զհոլովս անուանց, զուղղականն, զսեռականն եւ որ ի կարգին»²⁰, գ) նույնպես 6 հոլով է ընդունել՝ ասելով. «Հոլովք (են) անուանց վեց. ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական»²¹, դ) հիմնավորել է ուղղականի ևս առանձին հոլով լինելը և մյուս հոլովների հետ դրա կապն ու հարաբերությունը նկատի առնելով՝ նշել. «Արդ ասելով զուղղականն հասարակականին եւ յատկականին ի հոլովս, յայտ արար եթե ոչ միայն երկու նշանակութիւնք են անուան, այլ եւ ընդհանրական անուն պարփակող նոցին, ուստի հոլովեցան. եւ հոլովեալ ի նմանէ ուղղորդապէս կառեան: Ապա ուրեմն բարոք զուղղականն հասարակականին եւ յատկականին հոլովս անուանեաց»²², ե) «ըստ զանազան նշանակութեանց» դերանունների հոլովները ներկայացրել է նոր անվանումներով՝ ուղղականը կոչելով «ուղղապէս»—ես, դու, նա, սեռականը՝ «բաժանական»—իմոյ, քոյոյ, նորայոյ, տրականը՝ «պատուիրական»—իճձ, քեզ, նմա, առաքականը (իմա՝ գործիականը)՝ երթալոյ—իճեւ, քեւ. նովաւ. թե քեւ կամ նովաւ եկի այսր, հայցականը՝ աղերսական՝ զիս, զքեզ, զնա և հոշականը՝ կոչնական՝ դու»²³, զ) ներկայացրել է նաև «աժանցացն»՝ ստացական դերանունների հոլովումը. իմ, քո, նորա, իմոյն, քոյոյն, նորայնոյն, իմումն, քոյումն, նորայումն. իմովն, քովովն, նորայովն. զիմ, զքո, զնորա»²⁴, է) հունարենի համեմատությամբ հայերենի հոլովման առանձնահատկություններն է մատնանշել, նրան խորթ համարել սեռը, երկակի թիվը, հոգի սեռային փոփոխությունը՝ ասելով. «Յուղս յալում լեզուի բազում ինչ ունի, այլ ի մերումս սակաւ, զի հոլովք եւ թիւք միայն լինին, բայց ըստ սերոցն ոչինչ նշանակէ»²⁵, ը) իբրև դերանվան շատ տեսակներ («տեսակք յոլովք») նշել է ոչ միայն ես-ի, դու-ի, նա-ի, այլև սա-ի, դա-ի սեռականից սերող եզակի՝ «յիմոյն, ի քոյոյն, ի սորայոյն, ի դորայոյն, ի նորայոյն» և հոգնակի՝ «ի մերոցն, ի ձերոցն եւ ի սոցայոյն, ի դոցայոյն, ի նոցայնոյն»²⁶ հոլովաձևերը՝ այդպիսով նկատելով «բացառականը, թեև այն որպես հատուկ հոլով չի առանձնացնում և չի անվանում»²⁷:

Այս ամենը վկայում է, որ հոլովները մեկնաբանելիս Անանունը ըստ կարելիության հանդես է բերել որոշ ինքնուրույնություն և իր հերթին նպաստ բերել նրանց լուսաբանմանը:

Նույնը կարելի է ասել նաև Մովսես քերթողի մասին: Ընդունելով, նույնպես, որ «Հոլովք վեցն են», Մովսես Քերթողը՝ ա) ճշտորեն է ըմբռնել ուղղականի առանձնահատկությունը՝ ասելով. «Բայց ի հայումս միով պակաս յալայլմունս երեւի գոլ, զի ուղղականն գոյացութիւն միայն երեւի գոլ անհատապէս՝ Գրիգոր»²⁸, բ) սեռականը և տրականը ձեռով նույն, իմաստով տարբեր հոլովներ է համարել՝ ի հաստատումն դրա ասելով. «Եւ սեռական եւ տրական Գրիգորի կամ Գրիգորոյ, որոյ տեսակ գոլ որդին է եւ կամ պա-

²⁰ Նույն տեղում, էջ 143:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 151:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 150:

²⁶ Նույն տեղում, էջ 151:

²⁷ Գ. Զառուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, էջ 156—157:

²⁸ Ն. Աղանց, նշվ. աշխ., էջ 172:

տուէր ինչ առ նա եղեալ իրաց»²⁹, գ) առաքականի (իմա՛ գործիականի) երկնշանակութունը՝ միջոցի և ներգործման գործառույթն է նկատել և ըստ այդմ էլ նշել. «Այլ եւ առաքական՝ Գրիգորով, որ ոչ միայն այս, այլ եւ սխալանաց եւ պատուոյ նշանակիչ. ըստ որում մահ մարդով եւ յարութիւն գրէ առաքեալ արտայայտէ, որ ոչ է առաքական, այլ ներգործական»³⁰, դ) հայցականի՝ մի բան հայցելու, խնդրելու, աղերսելու՝ ուզելու նշանակութունը (գործառույթն) է ըմբռնել և այն նաև աղերսական անվանել. «Եւ հայցականն զԳրիգոր սւնի, որ հետեւանայ ըստ մեր աշխարհաց եւ զաղերսականն»³¹, ե) հոշականի ոչ միայն ընդհանուր կիրառութիւնը, այլև արտասանական բնույթն է նշել. «Այլ եւ հոշականն է կամ առ ինքն կոշումն ընծայեցուցանէ այսիւ աւդանուագ հնչմամբ»³²:

Եվ թեև դերանունների հոլովների վերաբերյալ Մովսես քերթողը որևէ նոր բան չի ասել և հիմնականում կրկնել է Անանունին, բայց այսքանն էլ ցույց է տալիս, որ նա ևս ճշտորեն է ըմբռնել հոլովի քերականական կարգը և աշխատել յուրովի բացատրել այն:

Գալով Ստեփանոս Սյունեցուն, պէտք է ասել, որ նրա մեկնության մեջ հոլովները առանձնակի քննության շնն արժանացել: Նկատելի է միայն, որ այնտեղ Ստ. Սյունեցին՝ ա) «հոլովական» բառից բացի գործածել է նաև «թաւալական» անվանումը. «Դարձեալ ասելն եթե անուն է մասն բանի, այսինքն անուն թաւալական մասն է բանի»³³, բ) շատ ավելի հստակորեն տարբերակել ու բացատրել թանձրացական և վերացական, հասարակ («հասարակարար») և հատուկ («յատկական», «յատկապէս») անունները, գ) հոլովները նույնպես վեցը և դրանք հավասարապես անվան փոփոխութիւններ է համարել՝ ասելով. «Եւ թաւալմունք անուանց են վեց, զորս կոչէ իմաստասէրս ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական, զորս մեկնէ ինքն, զխրթնութիւն անուանցս այսոցիկ»³⁴, դ) մի շարք դերանուններ ներկայացրել է իրենց եզակի և հոգնակի՝ ուղիղ և թեք ձևերով, ինչպես՝ ես, դու, սա, դա, նա—մեք, դուք, սոքա, դոքա, նոքա. իմ, քո, սոքա, դոքա, նոքա եւ մեր, ձեր, սոցա, դոցա, նոցա. եւ այս, այդ, այն եւ այսք, այդք, այնք...³⁵, ուղիղ և թեք ձևերը տարբերակել է իրարից և որոշ դերանունների (եւս, դու, սա, դա, նա) սեռականը համարել է ստացական³⁶:

Նշենք, որ դրա շարունակութունն էլ այդտեղ առկախ է մնում, որը և ցույց է տալիս, որ Գ. թրակացու քերականության ինչպես այլ մեկնիչների, այնպես էլ Ստ. Սյունեցու մեկնութիւնը լրիվ մեզ չի հասել, և չի բացատրում, որ հոլովների վերաբերյալ նա տված լինի նաև այլ, անշուշտ, կարևոր ու արժեքավոր բացատրութիւններ:

Խիստ պակասավոր է և՛ 9-րդ քերական Համամ Արևելցու մեկնութիւնը, որտեղ սոսկ նշվում է՝ ա) «Ընդունելութիւն է բառ. զի ոչ ունի հոլովս որպէս զանուն եւ ոչ զանազանի ի խոնարհմունս որպէս զբայն»³⁷, բ) հունարենի հոդի ինչ ձևով (նախադասական և ստորադասական) գործածութիւնը և այդ

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 204:

³⁴ Նույն տեղում, էջ 207:

³⁵ Նույն տեղում, էջ 215:

³⁶ Նույն տեղում, էջ 216:

³⁷ Նույն տեղում, էջ 265:

կապակցութեամբ էլ ասվում. «Թիւք երեք: <Եզական> այս՝ թե այս[ն] է զոր խնդրեսն...: յոգնականն՝ այսք, այդք, այնք. որպէս թե <յ> այսմ լերին այսք ժողովք են, կամ յայդ քաղաքի այսք իշխանք, կամ յայսմ հովտի այս ծաղիկք». «Իսկ հոլովք՝ այս, այսր, այսմ. որպէս թե ասես՝ այս գործ աստուծոյ է գործ. կամ այսր եկ եւ տես զսքանչելիս նորա. կամ թե այսմ գիտակից է Դաւիթ. այսու՝ այսու արինակաւ դու մարտեար եւ ես մարտնչեմ. զայս ով՝ որպէս թե զայս ով կարասցէ գիտել, որպէս թե զի խոր է, կամ թե զայս ով պատմիցէ եւ ի վերայ ածէ թե զայս ինքն տէր պատմեսցէ»³⁸:

Եվ թեև Դ. Թրակացու քերականութեան մեկնաբանմանը նվիրված և հունարանութեան ազդեցութիւնը իրենց վրա կրող բոլոր երկերը շնն, որ նույնութեամբ հասել են մեզ, բայց և այնպես շատ բան էլ պահպանվել-փրկվել է, և դա առաջին հերթին Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի (985—1058) շնորհիվ, որը և իր «Մեկնութիւն քերականին» երկով³⁹ ստեղծել է լեզվաբանական-քերականական, տեսական բնույթի մի աշխատութիւն՝ ամփոփելով այդտեղ նախորդ քերականների նաև այն մեկնութիւնները, որոնք հոլովներին ու հոլովմանն են վերաբերում:

Բայց պետք է ասել, որ դրա հետ մեկտեղ նա հայտնել է և՛ ինքնուրույն տեսակետներ: Հետևելով հունարենին և հայերենի հոլովները համեմատելով նրա հոլովների հետ՝ Գր. Մագիստրոսը նույնպես երկու տեսակի՝ նախդրավոր («նախադասեալ», «նախադասական») և աննախդիր («ստորադասական») հոլովներ է ընդունել և դա բացատրել այսպես. «Այլ թէ է՞ր աղագաւ յոյնք սովորեալ են յահախ վարիլ նախագաղափարաւն.— սակս երագութեանն եւ փոյթ վերահասու լինել, քանզի փոխանակեն զգիծ նախադասեալն: Եւ եթէ է՞ր աղագաւ հոլովք ստորադասական ի մեզ յոքնագոյն եւ ուղղական շարամանեալ յանգի, իսկ նախադասականն՝ սակաւ, քանզի յառատութենէ լեզուի մերոյ եւ գրոյս յոքնագոյն՝ ոչ այսմ կարատանայ դժոխադատութեան, զի յորժամ ասեմք նախադասելով ինի եւ զայի եւ այրի. այսպէս, զՊղատուն՝ այս հայցական է, իսկ զՊղատունոյ՝ սեռական, առ Պղատունով՝ տրական, ո՛վ Պղատուն՝ հոշական»⁴⁰:

Եվ այսպես՝ բացատրելով, թե ինչու հունարենում՝ նախդրավոր, իսկ հայերենում աննախդիր հոլովներն են գերիշխում, Գր. Մագիստրոսը հունարենին հատուկ հինգ հոլովներին («հոլովք հինգ եզականի») հակադրում է հայերենի աննախդիր հոլովները՝ ասելով. «Իսկ ստորադասականք յաւդին (=կազմվում են—Ա. Մ.) այսպիսի ինչ. ուղղական եզականի՝ Պղատուն, սեռական՝ Պղատունոյ, տրական եւ առաքական՝ Պղատունով, հայցական՝ զՊղատուն, հոշական՝ ո՛վ Պղատուն:

Յոգնական ուղղական՝ Պղատունք, սեռական՝ (առ) Պղատունեանց, տրականն եւ առաքականն՝ Պղատանաւքն, հոշական՝ ո՛վ Պղատունու»⁴¹:

Զուգահեռ անցկացնելով հունարենի և հայերենի հոլովների միջև, նա այնուհետև նշում է, թե հունարենի իգական և շեղոք սեռի, այլև երկակի թվի («երկուտրական») անունները հայերենում հետևյալ հոլովական ձևերով են արտահայտվում. «Իգականի եզական այ Պղատունի, սեռական՝ Պղատունու, տրական եւ առաքական՝ Պղատունուով, հայցական՝ զՊղատունուի,

³⁸ Նույն տեղում, էջ 266:

³⁹ Նույն տեղում, էջ 223—249, և. Գ. Խաչերյան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս (985—1058). Կյանքն ու գործունեությունը, Լոս Անճելես, 1997, էջ 353—464:

⁴⁰ Նույն տեղում, էջ 246 և 447—448:

⁴¹ Նույն տեղում:

հոշական՝ ո՛վ Պղատոնուհի»⁴², «Երկուորականի ուղղական՝ Պղատոնուհույ, տրական եւ առաքական՝ Պղատոնուհույ Պղատոնուհեան, հայցական՝ զՊղատոնուհի»⁴², «Յոգնականի ուղղական՝ Պղատոնուհիք, սեռական՝ Պղատոնուհեանց, տրասան եւ առաքական՝ Պղատոնուհաւ, հոշական՝ ո՛վ Պղատոնուհիք/Յ՛վ Պղատոնուհաւ»⁴³, այլև՝ «Երկուորականի ուղղական՝ առ Պղատոնիկոյ: Յոգնականի (ուղղական՝ Պղատոնուկ, սեռական՝ Պղատոնկաց), տրական եւ առաքական՝ զՊղատոնկաւ (ուղղատոնիկաւ), հայցական՝ զՊղատոնուկ, հոշական՝ ո՛վ Պղատոնուկ»⁴⁴. «Չեզոք անուան եզականի ուղղական՝ Պղատոնուկ, սեռական՝ Պղատոնկոյ, տրական եւ առաքական՝ Պղատոնկաւ, հայցական՝ զՊղատոնկէ, հոշական՝ ո՛վ Պղատոնիկ»⁴⁵:

Սեռերի և երկակի թվի համար ստեղծելով նման շինծու ու մերժելի ձևեր՝ Գր. Մագիստրոսը հունարենի հինգ հոլովների դիմաց հայերենում ոչ թե հինգ⁴⁶, այլ Թրակացու քերականության նախորդ մեկնիչների պես վեց հոլով է տարբերում և մի կողմից եթե հունարենի ՏΟΥΧΗ՛ (= տրական) հոլովի առանձնահատկությունը նկատի ունենալով՝ տրականն ու առաքականը միատեղ գործիականի նշանակությամբ է ներկայացնում, ապա մյուս կողմից աննախդիր հոլովման առավելությունն է շեշտում՝ ասելով. «Քանզի թէպէտ եւ յունաց սովորաբար եւ իսմայէլացոցն նախադասեալ է, բայց ոչ մինչև յաւարտ յանգեսցի նշանակէ ուղղապէս եւ այսմ երկուց տրամախոհութեանց ունել պէտս նոցա: Իսկ մերս միով յանգիւ նշանակէ անկարատաբար զբարեւ զօր եւ կարեւոր են մեզ (ընդգծումն իմն է—Ա. Մ.)»⁴⁷:

Գր. Մագիստրոսի հիշյալ մեկնություններով, կարելի է ասել, ավարտվում է հին հայերենի՝ գրաբարի հոլովների լուսաբանությունը շատ ավելի վաղ շրջանում, և դրան հաջորդում է մի նոր փուլ՝ որը նշանավորվում է XIII դ. ականավոր ու հայտնի գործիչ Վարդան Արևելցու «Մեկնութիւն քերականի» երկով⁴⁸:

Կարծիք է հայտնվել, թե իբր «Վարդանը հոլովների մասին ունի շատ տարտամ և անորոշ գաղափար, որը հանգում է ոչ թե այդ հոլովների էությունը ըմբռնմանը, այլ հենվում է նրանց անունների ստուգաբանության վերա»⁴⁹, բայց դա, իհարկե, այդպես չէ: Որդեգրելով հանդերձ նախորդ քերական-մեկնիչների տեսակետները անվան հինգ քերականական կարգերի («հետևմունքի»), հոլովների վեցը լինելու ու նրանց անվանումների (ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, կոշական), դերանվանական հոլովական ձևերի, հոդի մասին՝ Վարդան Արևելցին, այնուամենայնիվ, ձգտել է դուրս գալ անցյալի ամրակայված կաղապարումներից և ինչ-որ շափով նորովի լուսաբանել հայերենի հոլովները:

Այսպես՝ նա՝ 1) ուղղականը միանգամայն իրավացիորեն անվան նույնպես ուղիղ ձև համարելով՝ շատ ավելի պարզորոշ է բացատրել այն և նշել. «Եւ ասի ուղղականն անուանական», «Ուղղական ասէ, զի անուամբ ուղղի ա-

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, էջ 247 և 448:

⁴⁶ Տե՛ս Գ. Զաճովյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին միջնադարյան Հայաստանում, էջ, 220:

⁴⁷ Տե՛ս Ն. Աղոնցի և Լ. Խաչերյանի վերոհիշյալ աշխատությունները, էջ 247 և 449:

⁴⁸ Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, Երևան, 1972:

⁴⁹ Գ. Զաճովյան, նշվ. աշխ.-ը, էջ 256:

մենայն: Ըն անու(ա)կանն պարզ է, որպէս որ ասես Սմբատ, Քրիզոստ⁵⁰, 2) անցնելով թեք հոլովներին՝ ա) նախ պատկերավոր համեմատութեամբ դրանք բնութագրել է համատեղ՝ ասելով. «Իսկ սեռականն որպէս ընդհանուր՝ կենդանին. եւ տրականն՝ որպէս Աստուածատուր կամ Տիրատուր, առաքականն՝ որպէս դեսպան կամ առաքեալ. հայցականն՝ որպէս խնդիրք կամ յոյզք. իսկ հոշականն հիացական ասի եւ կամ կոշած իրք եւ եկած»⁵¹, և ապա՝ տվել է լրացուցիչ բացատրութիւններ և նշել. ա) սեռականը նշանակում է «ստացական և հայրենի» ու սերում է ցույց տալիս «որպէս տարսոնացի, սելեկացի և կամ կեսարացի, և կամ որպէս ի հայրական սեռէ, որպէս Պանլաունի, Բագրատունի և կամ այլ այնպիսիք»⁵², բ) տրականը նշանակում է «պատուիրական», և ըստ յունացն «թղթական» ասի, որպէս զերդ ասես «թղթաւոր» և կամ «թղթաբեր» և ըստ մեզ՝ տրականն «պատուիրական» ասի, իբր թէ տուեալ լինի ումեք իշխանութիւն և առաքեալ ի գաւառ և յաշխարհ հրամանաւ թագաւորի կամ հայրապետի, և ըստ այնմ իրացն և զանունն կոչեն՝ ասելով նուիրակ կամ պատուիրոջ»⁵³, կամ՝ «Ըն տրականն «թղթական» կոչի. թուղթ է բերած ինձ, քեզ, նորա (նմա)», ինչպես՝ «Ըտ աւրայ զայս ինչ՝ ինձ, քեզ, նմա»⁵⁴, գ) առաքականը «որպէս դեսպան կամ առաքեալ», «ցուցական» (= ցույց տվող) է նշանակում, ինչպես՝ ինև, քև, նովաւ: Ինև երթայ այս անուն, քև երթայ»⁵⁵:

Վ. Արեւելցին, սակայն, շատ ավելի հանգամանորեն է բնութագրել հայցական և հոշական հոլովները՝ նշելով. «Իսկ հայցականն, որ ասի խնդրական, որպէս Աննա, որ զորդոյնն անունն Սամուէլ կոչեաց, որ թարգմանի «խնդիրք», զի հայցեաց յաստուծոյ և էառ: Ըն որ ասէ ըստ հելլենացոց լեզուին փաստական, որ է «պատճառական», իբր թէ կոչես զոք ի բարի կամ ի շար, զի բարին և շարն պատճառ է կոչեցելոյն»⁵⁶, այլև՝ «Հայցականն՝ զիս առաքէ յայն բան, զքեզ առաքէ, զնա առաքէ»⁵⁷. «Ըն հոշականն՝ առասական. ենթակաւ անուամբ», «Հոշականն «կոշական» ասի. և զի՞ ասէ զհոշականն «առասական», որ է հասարակ անուն, որպէս յորժամ ասես՝ «Մարդ կոչեա առ իս և կամ կին, որ է հասարակ անուն, երբ շասես, թէ կոչեա ըզլեռն կամ զՍարգիս, զՇուշան և կամ զԹամար, և իսկական անուամբն, որպէս որ ասէ «ենթակաւ անուամբն», «այսինքն՝ առնթեր՝ մերձակայ անուամբն. զի մարդն մերձաւոր անուն է, քան զՎարդանն և զՍմբատն, որ է յատուկն»⁵⁸, կամ՝ «Հոշականն «կոշական» թարգմանի, որպէս ասէ՞ դու, այսսիքն՝ ե՛կ. կամ՝ Դ՛ու կոչեա զայս անուն, Դ՛ու կոչեցե՛ր զիս»⁵⁹:

Այսպիսով, ակներև է, որ Վ. Արեւելցին հոլովների մասին ոչ թե «շատ տարտամ ու անորոշ գաղափար է ունեցել», այլ ժամանակի լեզվաբանական-քերականական գիտութեան մակարդակին համապատասխան պատկերել է դրանք, օրինակների միջոցով ևս ցույց տվել, թե որը ինչ է նշանակում: Նրկատելի է նաև, որ ինչպես քերականական այլ իրողութիւնները, այնպես էլ հոլովները ներկայացնելիս նա դրսևորել է լեզվաբանական լուրջ կարողութիւններ: Օրինակ, դերանունների և գոյականների խոսքամասային տարբե-

⁵⁰ Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի, էջ 111:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում, էջ 112:

⁵⁴ Նույն տեղում, էջ 136:

⁵⁵ Նույն տեղում, էջ 137:

⁵⁶ Նույն տեղում, էջ 112:

⁵⁷ Նույն տեղում, էջ 137:

⁵⁸ Նույն տեղում, էջ 112:

⁵⁹ Նույն տեղում, էջ 137:

րությունը գիտակցելով՝ նշել է. «Թայց և տիրանուն ասի դերանունս, այսինքրն՝ ճշմարիտ անուն, զի ասն այս հին է և մշտնջենաւոր՝ ես, դու, նա, նորա, նոցա, նոքա, քան զՄովսէս, և զԱհարովն և զՊաւղոս և զՊետրոս կամ զՊղատոն և զՍուրբաւ...»⁸⁰:

Այլ պատկեր ենք տեսնում Վ. Արևելցու աշակերտ Հովհաննես Երզնկացու (1230—1293 թթ.) «Հաւաքումն մեկնութեան քերականի» երկում⁸¹: Նպատակ ունենալով այդտեղ ամփոփել նախորդ մեկնիչներին՝ Դավթի, Անանունի, Մովսեսի, Ստ. Սյունեցու, Համամ Արևելցու և այլոց քերականական ծառանգությունը՝ Հ. Երզնկացին դա իրագործել է ամենայն բարեխղճութեամբ և Գր. Մագիստրոսի համեմատութեամբ շատ ավելի մեծ ծառայություն մատուցել հայ քերականագիտութեանը: Ըստ ամենայնի ներկայացնելով այն ամենը, ինչ ասել են նախորդ հայ քերականները անվան ու նրա քերականական կարգերի, հոլովների ու հոլովման համակարգի, դերանունների, դրանց տեսակների ու հոլովական ձևերի, հոդի ևնի մասին, Հովհ. Երզնկացին ոչ թե, իհարկե, պատիվ հայեցողական, այլ քննական մոտեցում է հանդես բերել և տարբերելով գլխավորն ու երկրորդականը՝ ցույց տվել, թե ի՞նչն է արժեքավոր ու կարևոր: Այսպես՝ նա՝ ա) ճիշտ է համարել այն տեսակետը, որ անունը, իբրև խոսքի մաս, պետք է նախորդի բային, որովհետև «նախ՝ յառաջանալ ի դէպ էր գոյացութեանն, քան զպատահումն, յայտ է թէ անուան՝ քան զբայի»⁸², բ) ուղղականը ևս ինքնուրույն հոլով է համարել և դառնալով այն հարցին, «թէ զիա՞րդ գուղղականն ի համար դասեաց հոլովիցն» հարցին՝ իր հերթին նշել, որ դա է այն սկզբնաձևը, որից «ուղղորդապէս կառեան» մյուս հոլովները, գ) նախորդ քերական-մեկնիչների պես հոլովների որոշման հիմունք է ճանաչել և՛ նշանակութունը, և՛ ձևը՝ համապատասխան օրինակներով ցույց տալով յուրաքանչյուրի առանձնահատկությունը, դ) հոլովները ներկայացրել է նաև այնպիսի օրինակներով, որոնք նոր են ու բացակայում են ուրիշների երկերում, ինչպես՝ Աստուած՝ ուղղական, Աստուծոյ՝ սեռական, Աստուծում՝ տրական, Աստուծով՝ առաքական, զԱստուած՝ հայցական, ո՛վ Աստուած՝ հոշական. դարձեալ՝ ըստ մարդոյս. մարդ՝ ուղղական, մարդոյ՝ սեռական, մարդում՝ տրական, մարդով՝ առաքական, զմարդ՝ հայցական, ո՛վ մարդ՝ հոշական»⁸³, ե) նույնկերպ է ներկայացրել նաև ընդունելութեան (անցյալ դերբայի) հոլովումը, ինչպես՝ «արարեալ, արարելոյ, արարելում, արարելով, զարարեալ, է՝ արարեալ և այլն ամենայն»⁸⁴ և այլն:

Հոլովները Հովհ. Երզնկացու պես է ըմբռնել ու պատկերել նաև նրա աշակերտ Ծսայի Նշեցին (1260—65—մոտ 1338) իր «Վերլուծութիւն քերականութեան» երկում. ուստի չկրկնելու համար մնում է ասել, որ նա ևս որդեգրելով անցյալի քերականների մեկնությունները և դրանք արժեքավորելով ու փոխանցելով հաջորդ սերունդներին՝ ոչ միայն իր հերթին հին հայերենի՝ գրաբարի հոլովների նկարագիրն է տվել, այլև նրանց ուսմունքի հետագա զարգացման հիմքերն է ամրակայել:

Եվ, անշուշտ, հայ քերականագիտական մտքի անցյալի նվաճումների վրա է խարսխվում հոլովական այն ավելի գիտական ու հիմնավոր տեսությունը, որ ստեղծել է քերական Հովհաննես Քոնեցին (մոտ 1290—92—1347) իր «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» երկասիրութեամբ⁸⁵:

⁸⁰ Նույն տեղում, էջ 136:

⁸¹ Յովհաննէս Երզնկացի, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անճելէս, 1983:

⁸² Նույն տեղում, էջ 194:

⁸³ Նույն տեղում, էջ 212:

⁸⁴ Նույն տեղում, էջ 248—249:

⁸⁵ Յովհաննէս Քոնեցի, Ցաղագս քերականին, Երևան, 1977:

Դա, ինչպես ուսումնասիրողներն են նկատել, իրո՞ք «հայերեն լեզվի առաջին գիտական քերականությունն է», որտեղ բազմազան քերականական իրողությունների հետ գիտական ավելի լայն ու խոր լուսաբանություն են ստացել նաև նրա հոլովները:

Ի տարբերություն Գ. Թրակացու «Արուեստ քերականական» թարգմանական աշխատության նախորդ բոլոր մեկնիչների, որոնք խիստ կաշկանդված են մնացել նրա ազդեցության կապանքներում և հայերենի վերաբերյալ մի տեսակ «երկյուղով» են նորություններ հայտնել, Հովհ. Քոնեցին հայ քերականության պատմության մեջ առաջինն է կարողացել հաղթահարել դրանք և նաև հոլովների այնպիսի վերլուծություն կատարել, որ աչքի է ընկնում ավելի խոր գիտականությամբ և մի շարք նորություններով:

Այսպես՝ նա՝

ա) Անվան և դերանվան քերականական կարգերին հավելել է նաև «անկումն»/«անգումն» քերականական կարգը (ինչպես՝ «Եւ հետեւին անուան վեց. տեսակք, սերք, թիւք, ձեւք, հոլովք, անկումն»)՝⁶⁶ հոլովի անվան տակ նկատի ունենալով հոլովումը, իսկ «անկումն» («անգումն») անվան տակ՝ հոլովը (падеж, Case, Casus):

բ) Հոլովումները յոթն է համարել և դրանք որոշելով սեռական հոլովի վերջին վանկի ձայնավորով՝ նշել. «Եւ հոլովք են անուանցն եւթն, այսինքն առաջին այք և այլ ձայնաւոր տառքն ըստ այսմ կարգի. ա, ե, ի, օ, ո, ու, է»⁶⁷:

գ) Շատ ավելի պարզորոշ է նշել, թե որոնք են ձևով նման և տարբեր հոլովները, ինչպես նաև բացառականը հաստատապես առանձին հոլով է ճանաչել՝ ասելով. «Եւ անգումն անուանց են Զ (6) / ուղղական, սեռական, տրական, հայցական, կոչնական, առաքական:

Արդ հոլովն է փոփոխումն ձայնի, զի ըստ զանազան փոփոխումն. մարդ—ուղղական, մարդո—սեռական, ի մարդ—տրական, զմարդ—հայցական, ո՞վ մարդ—կոչնական, ի մարդէն—առաքական: Գիտացիր, զի առաքականք են երկու, այսինքն ի մարդէն կամ մարդով, նա տի նա տրականքն են Բ (2). ի մարդն կամ մարդում: Դարձեալ ուղղականն և կոչնականն են զօրութեամբ մի, որպէս մարդ, է՛ մարդ»⁶⁸:

դ) Անվան յուրաքանչյուր հոլովի նշանակությունն ու կիրառությունն է ներկայացրել խոսքում, բառերի կապակցության՝ շարամանության մեջ և համապատասխան օրինակներ բերելով՝ նշել. «Արդ վեց են անգումն ըստ այնմ, որ վեց կերպիւ յարառոցի (ի) շարամանութիւնն:

Առաջինն է ուղղական, ուղղապէս եղեալ լինի ի շարամանութիւն բանին, որպէս այս մարդ ընթանա:

Երկրորդ՝ սեռականն, որ դնի ի շարամանութիւնն զօրութեամբ ստացուածոյն, հիբար տուն մարդոյ:

Երրորդ՝ տրական, որ եղեալ լինի ի շարամանութեանն զօրութեամբ տալոյն, հիզան տուր ի մարդն:

Չորրորդ՝ հայցականն, որ դնի ի շարամանութիւնն զօրութեամբ հայցականին, որպէս կու սիրեմ զմարդն, զի ասութիւնք, որ նշանակէ ըստ կերպի ասացելու ի յայլս, միշտ պահանջէ զհայցականն:

⁶⁶ Յովհ. Քոնեցի. Յաղագս քերականին, էջ 164:

⁶⁷ Նույն տեղում, էջ 170:

⁶⁸ Նույն տեղում, էջ 171: Նշենք, որ շատ երկար ժամանակ հայցականի նախորդվ ձևը տրական է համարվել:

Հինգերորդ՝ կոչնականն, որ դնի ի շարամանութիւնն զօրութեամբ կոչմանն, որպէն ո՛վ մարդ:

Վեցերորդ՝ առաքականն, որ եղեալ լինի ի շարամանութիւնն զօրութեամբ առնլոյն, որզան առ ի մարդոյն»⁶⁹:

Ե) Դերանունների հոլովման ու հոլովների տարբերակում է կատարել՝ գտնելով, որ «Հոլով (իմա՛ հոլովում—Ա. Մ.) դերանունացն են հինգ. իմ, ոյ, որ, րա, ան:

Առաջինն է այս, որ ուղղական է ես, սեռական լինի իմ: Երկրորդն է, որ ուղղականն է դու, սեռականն լինի քո: Երրորդն է, որ ուղղականն է այն, սեռականն լինի այնոր: Չորրորդն է, որ ուղղականն է սայ, սեռականն լինի սորա: Հինգերորդն է, որ ուղղականն է ինքն, սեռականն լինի ինքեան»⁷⁰, իսկ «անկումը» (= հոլովը) տարաքանակ է, և «ցուցական դերանունքն ունին հինգ անգումն, այսինքն զուղղականն, զտրականն, զհայցականն, զառաքականն և զսեռականն: Դարձեալ ստացական դերանունքն երկուքն, այսինքն իմն և մերն, ունին հինգ անգումն. զսեռական, զտրական, զհայցական, զկոչնական, զառաքական, իսկ հինգն ի ստացականացն ունին զչորս անգումն, այսինքն զսեռական, զտրական, զհայցական, զառաքականն: Դարձեալ ամենայն ստացականաց բազմաւորականքն ունին զվեց անգումն, իսկ հարցական դերանունքն ով և որն, սոցա եզականքն ունին զհինգ անգումն, քանզի ոչ ունին զկոչնական, իսկ ով-ին բազմաւորականն ունի միայն Գ(Յ) անգումն. զուղղականն, զտրականն և զհայցականն, իսկ որ-ին բազմաւորականն ունի հինգ անգումն, միայն ոչ ունի զկոչնականն: Իսկ թվական դերանունքն, եւթն ի սոցանէ ունի հինգ անգումն և մինն նոցա, այսինքն ոչ ոք ունի երեք անգումն՝ զուղղական, զտրական և զհայցականն»⁷¹:

զ) Հայերենի քերականութեան պատմութեան մեջ առաջինն է փաստել նախդիրների (= կապերի) խնդրառությունը՝ նշելով. «Եւ հետևի նախդրացն մին, այսինքն կառավարել զանգումն: Արդ են՝ ոմանք, որ խնդրեն զուղղական և զտրականն, որբար առ, մերձ, դէպ, ի ներս, ով. մինչև, իբր, ի և են, որ խնդրեն զսեռականն, հիպէս առաջի, ընդդէմ, յայսկոյս, յայնկոյս, ի մէջ, վասըն, ըստ, յետ, առանց, ի վերոյ, ի վերայ, ներքո, ներքև, ընդ, յաղագս, և են, որ խնդրեն զհայցականն, հիպէս շուրջ, և են, որ խնդրեն զառաքականն, հիզան զատ, ի դրաց, ի բաց:

է) Նմանապես առաջինն է լուսարանել հոլովների տարատեսակ իմաստները և նշել, ասենք, սեռականի համար 15 (օրինակ՝ «զօրութեամբ առնչականին՝ ճայր Յոհանու, տէր Յօսեփու, նշանակիչք ստացուածոց՝ տունն Պետրոսի..., անուանք որ նշանակեն զգով կամ զպարսաւ՝ վարդապետ առաքիւնութեան, ծառա մեղաց..., անուանք գերադրականք՝ զօրեղագոյն մարդկան..., նշանակիչք յատկութեան՝ սևութիւն ազուաի, ծիծաղականն մարդոյ, խրխնջականն ձիո...» և այլն), տրականի համար՝ 4 («առնչականք՝ այս է ինձի ճայր, այս է ինձի տէր, այս է ինձի ծառա..., յայտնիչ ստացուածոց՝ հանդերձս այս լիցի քեզ, տունս այս է քեզ, երիվարս այս է քեզ, բացահայտիչ ազտակարութեան կամ վնասակարութեան՝ այս է բարի ինձ, այս է շար ինձ, այս է ազուտ ինձ..., անուանք բայածականք՝ է ինձ սիրական, է ինձ սիրելի, է ինձ գովելի»), առաքականի համար՝ 6 (ինչպես՝ «անուանք, որ նշանակեն զգով կամ զպարսաւ կամ զօրութիւն իմն՝ հզաւր զօրութեամբ, գեղե-

⁶⁹ Յովն. Քոնեցի, Յաղագս քերականին, էջ 172:

⁷⁰ Նույն տեղում, էջ 173:

⁷¹ Նույն տեղում, էջ 175—176:

⁷² Նույն տեղում, էջ 189:

ցիկ աչաւ, երեսով, համեստ առաքինութեամբ, բարի հասակաւ, համեմատականքն՝ մեծագոյն թգաւ միով, Գալիանոս հմտագոյն բժշկութեամբն Բան զՀովմերիոս, մակադրական անուանք→նիւթական՝ այս նման է այնմ նիւթով. արարողական՝ այս նման է այնմ արարուածովն. ձևական՝ այս նմանի այնմ ձևովն. վախճանական՝ այս նմանի այնմ երանութեամբն... անուանք նշանակիչք լիութեան կամ դատարկութեան՝ անօթս լի գինով, կամ դատարկ ի գինո. անուանք թվականք, բաշխականք, դասականք՝ երկուք ի ձէնք, ոմանք ի ձէնք, առաջինն ի մէնք, երկրորդն ի ձէնք») նշանակութիւնն⁷³:

ը) Քննել է բայերի խնդրառութիւնը և ցույց տվել, թե ըստ իրենց իմաստի նրանք ինչ հոլովների հետ են գործածվում կամ ինչ հոլովով են խնդիր առնում:

Այս վերջին կետն էլ առանձնացնելով՝ պետք է ասել, որ Հովհ. Քոնեցիին հոլովները քննել է նաև շարահյուսական տեսակետից՝ հիմնականում ճիշտ ներկայացնելով նրանց կիրառութիւնները խոսքում, բառերի կապակցութեան մեջ: Նա փայլուն կերպով է պատկերել ինչ բնույթի բայերի հետ հատկապես հայցական, առաքական (իմա՛ գործիական և բացառական) հոլովների գործածութիւնը և նրբորեն նկատել, որ հայցական հոլով են պահանջում («խնդրեն») ոչ միայն «ամենայն առնողական բայք», հիկէն կու տեսանեմ վերինս, կու սիրեմ զաստուած, կու շինեմ զեկեղեցին, կու փորեմ զայգին, կու վարեմ զանդաստանս, կու գրեմ զգիրս. կու նաշխեմ զտունս, և նմանք սոցին», այլև այնպիսիք, որ՝ «են նշանակիչք ժամանակաց» («որպակ մնացի ի Հոռմ զերիս ամս, կացի յԵրուսաղէմ զամիսս երիսս) և կամ՝ «վերաբերին», ա) «առ ուսումն» («որկէն կու ուսուցանեմ զբեզ, կու զգուշացուցանեմ զբեզ»), բ) «առ ի վաճառելն» («կու վաճառեմ զայգին, կու ծախեմ զհանդաստանն, կու զենեմ զգիրս»), գ) «առ զով կամ առ պարսաւ» («որպէս կու գովեմ զբեզ, կու նախատեմ զմարդ, կու պարսաւեմ զատանա»), դ) «ի կերակուրս» («որգունակ կու ուտեմ զհացն, կու ըմբեմ զգինին, կու կերակրեմ զժողովուրդն, կու սնուցանեմ զորդիսն»), ե) «առ հեշտութիւնս» («որպէս կու հեշտացուցանեմ զանկողինս, կու փափկացուցանեմ զբեզ, կու գիւրացուցանեմ զգառն») և այլն⁷⁴:

Հովհ. Քոնեցիին նման տարաբաժանումով է ներկայացրել նաև առաքական հոլովը՝ գտնելով, որ մի՛ գործիականի ու բացառականի դեպքում այդպիսիք պահանջում են՝ 1) «ամենայն բայք, որ վերաբերին»՝ ա) «ի լիութիւն կամ յունայնութիւն», (հիբար գինով ի լի է, դատարկ է ի գինո), բ) «ի խընդութիւնս» («հիկէն խնդամ ի քեզանէ, կու ուրախանամ աստուծով, կու ցնծամ տանիւս. կու զուարեանամ հոգով»), և կամ էլ՝ գ) պատճառական բայեր («բայք պատճառականք» են՝ «նիւթական» («որպէս արարի մատանի յսկո, ի յարծաթէն, ի պղընծէն») կամ «արարողական» («որպէս արարի ձեռօք, կրակով, կոանով») նշանակութեամբ⁷⁵, իսկ մյուս դեպքում՝ բացառականն ու գործիականը տարազատել է և նշել, որ՝ 1) բացառական են պահանջում «բայք, որ վերաբերին»՝ ա) «ի յանճատումն» («հիբար կու հեռանամ ի քէնէ, կու զնամ ի տանէն, կու հրածարիմ ի սատանէ, կու բաժանիմ ի յեկեղեցո. կու դառնամ ի քեզանէ»), բ) «ի հարցումն կամ ի խնդրուած» («որբար կու հարցանեմ ի նոցանէ, կու խնդրեմ ի քնէ»), գ) «առ ամբաստանութիւնն» («որկէն կու ամբաստանեմ զբեզ ի զողութենէ, կու յանդիմանեմ զբեզ ի մեղացն»), և կամ՝ դ) «նշանակեն զպարկեշտութիւն» («որգունակ կու պարկեշ-

⁷³ Յովհ. Քոնեցի, Յաղագս քերականին, էջ 195—198:

⁷⁴ Նույն տեղում, էջ 203—204:

⁷⁵ Նույն տեղում, էջ 204—205:

տանամ ի գինո, կու ժուծկայեմ ի մսէ, ի մրգէ, ի հացէ»), կամ էլ՝ *ե*) են «բայք կրողականացն» («որպակ [կու] սիրուիմ ի քենէ, կու ուսանիմ ի քեզանէ, կու յաղթուիմ ի մարդկանէ...»)։ 2) *զործիական են պահանջում «բայք, որ էշանակեն»՝ ա*) «զորութիւն կամ զունակութիւն» («որզան՝ կու իմանամ իմացականովս. կու տեսանեմ աշօքս, կու խօսիմ բերանովս, կու լսեմ ականջովս, կու տաշեմ ուրագովս, կու հաւանիմ գիտութեամբ, կու գիտեմ հաւատով, կու հաւատամ յուսով, կու սիրեմ հոգով»), *բ*) «զհատկութիւն» («որբար՝ գեղեցիկ երեսով, կատարեալ հասակաւ, համեստ վարիւք, պատկանելի դիմով, յօժար սրտով») և կամ՝ *գ*) «վերաբերին ի վաճառելն» («որզոն՝ կու գնեմ զծին մեծ գնով, կու վաճառեմ զկտան փոքր գնով»)76:

Ուղղականը բնութագրելիս Հովհ. Քոնեցին ցույց է տվել, որ «ամենայն անձնական բայ խնդրէ զուղղականն յառաջկոյս, հիպէս՝ ես ընթանամ, դու ընթանաս, նա ընթանա», որ այն իբրև ենթակա դեմքով ու թվով համաձայնում է ստորոգյալի հետ և կարող է հանդես գալ բայից ոչ միայն առաջ, այլև հետո: Այդպես և նա ճշտորեն նկատել է, որ կոշականը միշտ գործ է ածվում ով բառով («ո՛վ հայր, ո՛վ եղբայր, ո՛վ տէր, ո՛վ սիրելի. ո՛վ մարդ») և սովորաբար հրամայական բնույթի նախադասութիւններում, ինչպես՝ «ո՛վ Պետրէ, արա զայս ինչ. ո՛վ Մաթէ, արա զայս ինչ. ո՛վ Գրիգոր, գնեա՛ զայս ինչ»77:

Այսքանից, սակայն, չի կարելի հետևանքել, թե Հովհ. Քոնեցին լիովին կամ սպառիչ կերպով լուսաբանել է հայերենի հոլովներն ու հոլովման համակարգը և կամ նրանց մասին միայն ճիշտ, արժեքավոր ու այսօր անգամ իրենց թարմութիւնը պահող տեսակետներ է հայտնել: Որքան էլ զարմանալի թվա, նա չի կարողացել որոշակիորեն տարբերել սեռականը տրականից, բայերի խնդրառութիւնը («կառավարութիւն») քննելիս տրականի ձևերն անխըտիր սեռական է համարել, ինչպես՝ «կու ծարաւիմ ջրոյ», «գնեցի զծին մեծ գնոջ», «շատագով կու լինիմ ընկերին». «կու պատմեմ աշակերտաց», «կու հետևիմ վարդապետին», «կու հասանիմ արդարոց», «կու ցաւակցիմ հոգոց» և այլն, մյուս կողմից էլ զուտ իմաստից ելնելով՝ նախդրիվ հայցականի ձևերն է համարել տրական՝ ասելով «գիտելի է, զի ամենայն բայք, որ նշանակեն զյարակցութիւն, խնդրեն զտրական, հիպէս կու մերձենամ ի յաստուած, կու հպիմ ի սուրբս, կու յարիմ ի յիմաստունս, կու մօտենամ ի քաղաք, կու դարձուցանեմ ի յաստուած, կու գնամ ի յեկեղեցիք, և նմանք սոցին»78:

Այս և նման, մեծ մասամբ անխուսափելի և ժամանակի լեզվարանական-քերականական գիտութիւն մակարդակով պայմանավորվող, սխալները, անճիշտ ու անհիմն բացատրութիւններն ու մեկնաբանութիւնները ամենևին չեն նսեմացնում Հովհ. Քոնեցու հոլովական տեսութիւնն արժեքն ու նշանակութիւնը:

Հովհ. Քոնեցին բոլոր դեպքերում հոլովները ավելի խոր ու լայն է լուսաբանել և մի շարք նորութիւններով ու վերլուծութիւններով նրանց ուսմունքը մեկնողական աստիճանից գիտական աստիճանի հասցրել՝ պատվաւոր տեղ գրավելով հայերենի քերականութիւնն պատմութիւն մեջ ընդհանրապես: Իսկ դա, անշուշտ, բացատրվում է նրանով, որ նա չի բավարարվել սոսկ Դ. Թրակացու ու դրա մեկնիչների՝ հոլովների մասին ասածներով, այլ

76 Նույն տեղում, էջ 204—205:

77 Նույն տեղում, էջ 200, 204:

78 Նույն տեղում, էջ 202—203:

առավելապես հիմնակետ ունենալով հայոց լեզուն՝ աշխատել է պարզել, թե իրապես ինչ պատկեր են ներկայացնում հոլովներն այնտեղ:

Այդ տեսակետից, բնականաբար, Քոնեցու հոլովական տեսութունը զգալապես տարբերվում է նախորդ բոլոր քերականների մեկնություններից և աչքի է ընկնում նաև փաստական նյութի հարստությամբ: Ընդ որում՝ հին հայերենից՝ գրաբարից բացի մի շարք դեպքերում նա դիմել է նաև ժամանակի խոսակցական լեզվին կամ միջին հայերենին՝ այդպիսով փաստորեն կաններև դարձնելով այն ընդհանրություններն ու տարբերությունները, որ երևան են հանում նրանք հոլովական համակարգում:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Հովհ. Քոնեցին իր «Համառոտ հալաբումն յաղագս քերականին» երկով ըստ էության փակել է հաշիվները նախորդ՝ մեկնողական բնույթի քերականությունների հետ և նոր դուռ բացել հայ քերականագիտության հետագա զարգացման համար:

Այդ դրան շեմին մենք կանգնած ենք տեսնում Առաքել Սյունեցուն (1350—1422), որը իր «Յաղագս քերականութեան համառոտ լուծմունք» երկում⁷⁹ շարունակելով հետևել Դ. Թրակացուն և նրա մեկնիչներին՝ հոլովների մասին տված բացատրություններով մի կողմից եթե շատ է զիջում Քոնեցուն, ապա մյուս կողմից, կարծեք, ձգտում է նոր խոսք ասել և ինչ-որ շափով նորովի լուսաբանել հայերենի հոլովները:

Նախորդների պես հոլովը՝ անվան քերական կարգ, հոլովների թիվը վեց համարելով՝ Առ. Սյունեցին, ա) բացահայտում է անվան և բայի, իբրև խոսքի մասերի, առանձնահատկությունները, այն, որ «անունն զբնութիւն իրին ցուցանէ, իսկ բայն՝ զագզումն միայն», «անունն պարունակող է, իսկ բայն՝ պարունակեալ ընդ անումբ», «անունն էութիւն է, իսկ բայն՝ պատահումբն»⁸⁰, և նշում, որ «անուն հոլովի (= անունը հոլովվում է—Ա. Մ.), իսկ բայը չի հոլովվում («իսկ բայ ոչ հոլովի»)»⁸¹. բ) փորձում է հիմնավորել՝ «թէ վասն է՞ր վեց են հոլովք անուանցն»⁸² և ուղղականը առանձնացնելով մյուս հոլովներից՝ գտնում է, որ «նախ՝ զի որչէս անունն մի էր և հինգ իր հետեեցան նմա, այսպէս և ուղղական անուն մի է եւ հինգ հոլովք հետեեցան նմա: Երկրորդ՝ զի մի է ուղղական դիծ երկրի, այլ վեց են կողմունք, որով հոլովի ի սոսա արեգակն, այսինքն՝ արեւելք եւ արեւմուտք, հիւսիս եւ հարաւ, վերին եւ ներքին: Երրորդ՝ զի վեցն կատարեալ (") թիւ է եւ կատարեալն բոլորակ է՝ որ ոչ է խոռ, այլ բոլոր, գնդաձև. իսկ ամենայն ինչ, որ գնդաձև է՝ նմա [իմա՝ նման—Ա. Մ.] է հոլովին, որպէս երկինք եւ արեգակն եւ սայլի ակն եւ այլ սոյնպիսիք,—վասն որոյ վեց են հոլովք անուանըց»⁸³. գ) կապ է տեսնում անվան քերականական հինգ կարգերի («սերք, տեսակք, ձեւք, թիւք, հոլովք») և (ուղղականը հանած) նույնքան էլ հոլովների միջև և դիտում դա իբրև փոխկապակցված իրողություն:

Մի կողմ թողնելով ոչ գիտական հիմնավորումները, պետք է ասել, որ Առաքել Սյունեցին, այնուամենայնիվ, պատկերավոր համեմատություններ կատարելով՝ ճշտորեն է ըմբռնել հոլովի, իբրև անվան փոփոխված ձևի էությունը, ինչպես նաև անվան ուղիղ ձևի՝ ուղղականի և մյուս՝ թեք ձևերի կապն ու հարաբերությունը և բոլորն էլ միասին համարել մի ամբողջություն:

Այսքանով ավարտվում է հին հայերենի՝ գրաբարի հոլովների լուսաբա-

⁷⁹ Առաքել Սյունեցի, Յաղագս քերականութեան համառոտ լուծմունք, Լոս Անճելոս, 1982:

⁸⁰ Նույն տեղում, էջ 135:

⁸¹ Նույն տեղում, էջ 138:

⁸² Նույն տեղում, էջ 144:

⁸³ Նույն տեղում, էջ 148:

նությունը վաղ շրջանի՝ V—XV դդ. քերականների աշխատություններում, և որն էլ պարզորոշ լույս է տալիս, որ՝ ա) Հոլովի քերականական կարգը կարևոր տեղ է բռնել Դ. Թրակացու և նրա հետևորդ բոլոր հայ մեկնիչների քերականական երկերում:

բ) Հետևելով հիմնականում Դ. Թրակացու քերականական ուսմունքին՝ հայ մեկնիչները ոչ թե կուրորեն կրկնել են նրան, այլ, ի շարս մի շարք իրողությունների, հոլովների դեպքում ևս հանդես են բերել ինքնուրույնություն՝ հունարենի հինգ հոլովի փոխարեն հայերենի համար ընդունելով կամ նշելով վեց հոլով:

գ) Հայ քերական-մեկնիչները մշակել են հոլովների տերմինաբանությունը՝ ներկայացնելով նրանք գերազանցապես ուղղական (//անուանական), սեռական (//ստացական), տրական (//թղթական, //պատուիրական), հայցական (//աղերսական), առաքական (//պատճառական), հոշական (//կոշական //կոչնական) անվանումներով:

դ) Դ. Թրակացու քերականության մեկնիչները նրա թարգմանչից՝ Դավիթ Անհաղթից սկսած և ավարտած Առաքել Սյունեցիով, հոլովները դիտել են իբրև անվան հոլովված՝ փոփոխված ձևեր և որոշել նրանք նաև զբաղված արտահայտած նշանակությամբ:

ե) Վաղ շրջանի քերական-մեկնիչները հոլովի քերականական կարգը հատուկ են համարել նաև դերանվանը և մի շարք օրինակներով ներկայացրել նաև նրա հոլովման պատկերն ու առանձնահատկությունները:

զ) V—XV դդ. քերականներից յուրաքանչյուրը իր նպաստն է բերել հին հայերենի հոլովների յուսաբանման գործին, և արդյունքում ստեղծվել է մի ուսմունք, որը հիմք է ծառայել ընդհանրապես հայերենի հոլովական տեսության հետագա զարգացման համար:

է) Վաղ շրջանի քերական-մեկնիչներից իրավամբ առանձնանում է Հովհ. Քոնեցին, որն, իրոք, առաջինն է հայերենի հոլովները լեզվական շատ փաստերի հիման վրա քննության առել և ավելի խոր ու գիտականորեն լուսաբանել, առաջինն է կարողացել հաղթահարել կրկնվող կաղապարային պատկերացումները և ավելի պարզ պատկերել նրանց համակարգը:

Բայց այսքանից, իհարկե, չի հետևում և չպետք է հետևեցնել, թե լիովին վերացել է հայ քերականության վրա Դ. Թրակացու ու հունաբանության թողած ազդեցությունը, և կամ թե չէ՝ հայերենի քերականությունները XIV—XV դդ. արդեն ամբողջապես ձերբազատվել են նրանից. ամենևին:

Հատկապես նկատելի է, որ, օրինակ, հունարենի նմանողությամբ երկար ժամանակ կոշականը հայերենի համար ևս, այն էլ՝ միանգամայն անհիմն ու անտեղի, առանձին հոլով է ճանաչվել, առաքականը գործիականի և բացառականի նշանակությամբ իբրև մեկ հոլով է ներկայացվել, հունարենին հատուկ քերականական սեռի, երկակի թվի համար հայերեն շինծու ձևեր են կազմվել և այլն:

Միանգամայն հասկանալի է, որ, ձեռք բերված նվաճումներով հանդերձ, հայերենի հոլովական ուսմունքը պետք է շարունակեր քննության առնվել՝ մի կողմից հայոց լեզվի, մյուս կողմից՝ հայ քերականագիտական մտքի զարգացման պահանջով ու թելադրանքով:

Իրապես դա այդպես էլ տեղի է ունեցել. վաղ շրջանի՝ V—XV դդ. հունատիպ քերականություններին հաջորդած լատինատիպ քերականություններում հոլովները նույնպես կարևոր տեղ են բռնել և համապատասխան լուսաբանություն ստացել, որ, սակայն, առանձին քննության ենթ թողնում:

Ал. С. МАРКАРЯН—Падежи древнеармянского языка (грабара) в освещении грамматиков раннего периода (V—XV вв.).—Падеж как грамматическая категория имени с самого начала занимал достойное место в трудах армянских грамматиков раннего периода.

В статье рассматривается, как понимали и освещали падежи толкователи грамматики Дионисия Фракийского Давид Анахт, Ананун, Мовсес, Степанос Сюнеци, Амам Аревелци, Григор Магистрос, Вардан Аревелци, Иоанн Ерзнкаци, Есаи Ничеци, Иоанн Крнеци и Аракел Сюнеци.

С хронологической точки зрения в ней оцениваются заслуги каждого из них в освещении падежей грабара и отмечается, что:

а) принимая в основном грамматическое учение Д. Фракийского, армянские грамматики-толкователи проявляли и определенную самостоятельность и считали, что в грабаре шесть падежей вместо пяти греческого языка;

б) как Дионисий Фракийский, так и армянские толкователи рассматривали падеж как одну из грамматических категорий имени и определяли его и по значению и по форме склоняемого слова;

в) армянские грамматики-толкователи сыграли значительную роль в создании терминологии, относящейся к падежам и падежной системе грабара;

г) своими толкованиями они развивали учение о падежах армянского языка, что ярко отразилось особенно в грамматике Иоанна Крнеци (XIV в.), являющегося предшественником авторов латинизированных грамматик.